

ՊԵՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹԵԱՆՑ ՍՐՔԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԸ ՍԿՍԻՆ ԱՅՍՕՐ

Պետական ուսուցիչներու լիկաները Շաբաթ օր գումարեցին նահանգային ընդհանուր ժողովներ, որոնց ընթացքին վաերացուցին պետական քննութիւններու սրբագրութիւնը պոյթով ենթարկելու որոշումի գործարարութիւնը առկայելու առաջարկը:

Ժողովներուն որդեգրուած բանաձեւերը ընդգծեցին, որ պոյթը կ'առկայեն առիթ ընծայելու համար վարչապետ Հարիրի կազմած նահապարակային-երեսփոխանական յանձնախումբին, որ հետապնդէ յառաջիկայ քանի մը օրերուն ուսուցիչներու պահանջներու եւ իրաւունքներու վաերացումը:

Բանաձեւերը նաեւ ըսին, որ այս գծով ստացուած արդիւնքը սենտիքայական եւ պահանջատիրական ճիգերու մեծ իրագործում մըն է եւ անհրաժեշտ է գործադրել նահապարակային յանձնախումբին հետ ուսուցիչներու ներկայացուցիչներու Ուրբաթ օր գոյացած համաձայնութիւնը եւ վաերացնել ուսուցիչներու բոլոր պահանջները, ճշդուած պայմանաձեւերը յարգելով:

ՆԱԱՍԵ

Կրթութեան նահապարուծեան ընդհանուր տնօրէն Ժորժ Նամէ Շաբաթ օր պետական քննութեան յանձնախումբերու անդամները իրաւիւրեց Երկուշաբթի օր ժողովներ գումարելու, որպէսզի ճշդեն պետական քննութեան սրբագրութեան գործընթացը:

ԱՄԻՆ ԺԵՄԱՅԷԼ ԿԸ ՀԻՄՆԷ ՆՈՐ ՇԱՐԺՈՒՄ ՍԸ

Նախկին նահապահ Ամին Ժեմայէլ երէկ Պիքֆայայի մէջ յայտարարեց, որ հիմնուած է փաղանգաւորներու բարեկարգչական շարժումը: Ամին Ժեմայէլ յայտարարեց, որ Փաղանգաւոր Կուսակցութեան շարքերուն ընդմէջէն նշեալ շարժումը ընդդիմադիր շարժում մըն է ճշդելու համար կուսակցութեան ուղին:

Անդրադառնալով Չուքի Սալիտաթ Նաժաթ եկեղեցւոյ պայթումին, Սալիտայի չորս դատախազներու, Ռասաթ Կուսակցութեան նահապահ Էլի Հրպէյթայի եւ երկրաչափ Ռամպի Իրանիի սպանութիւններուն, Ժեմայէլ մտահոգութիւնը յայտնեց, որ նոյն կողմը կամ կողմերը իրենց գործողութիւններով կրնան գլխիվայր դարձնել նաեւ իր կուսակցական ընտանիքը:

Երեսփոխան Փիեթ Ժեմայէլ իր կարգին յայտնեց, որ իրենք կանգուն պիտի մնան Պեշիթ Ժեմայէլի որդեգրած քաղաքական ուղիին վրայ եւ պիտի աշխատին ծառայելու Լիբանանին եւ ոչ՝ անհատներու կամ կողմերու:

ՇՆՈՐԱԿԱԼԻԷ

●Տիկին Ալիս Արապ-Եան եւ զաւակները Երուանդ, Հրաչ եւ Գառնիկ շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով կամ նուրբ ստրուտներով մասնակցեցան իրենց ամուսնոյն եւ հոր՝ Տիգրան ԱՐԱՊԵԱՆԻ մահուան սուգին:

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

●Իրենց ամուսնոյն եւ հոր՝ Տիգրան Արապեանի մահուան քառասունքին առիթով, տիկին Ալիս Արապեան եւ զաւակները կը կատարեն հետեւեալ նուիրատուութիւնները:
Շ. Ա. Ը. Մ. Ի Շրջանային վարչութեան 100,000 Լ. ռ., Շ. Ա. Ը. Մ. Ի Անթիլիասի մասնաճիւղին 100,000 Լ. ռ., Շ. Ա. Ը. Մ. Ի Պեշիթի մասնաճիւղին 100,000 Լ. ռ., ԼՕՍԻ «Աղանձի Փափագեան» մասնաճիւղին 100,000 Լ. ռ.:

ՇՆՈՐԱԿԱԼԻԷ

●Տեր եւ տիկին Պետրոս եւ Արեգմազ Չոգազեան եւ զաւակները շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց, որոնք անձամբ, նուիրատուութեամբ եւ հեռաձայնով մասնակցեցան իրենց ամուսնոյն եւ հոր՝ ՎԱՐԴՈՒՄԻ ԳՈՂԱԳԼԵԱՆԻ մահուան սուգին:

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

●Խաճակ Ղազարեանի ընդ Մարիա Պոյաճեանի ամուսնութեան առիթով, Ս. Զառանգի Մանկանց քաղաքացիական խորհուրդը 100,000 Լ. ռ.՝ եկեղեցւոյ դպրաց դասին:
●Նոյն առիթով, Ս. Զառանգի Մանկանց Տիկնացի մասնաճիւղը 25,000 Լ. ռ.՝ եկեղեցւոյ դպրաց դասին:

ՄԱՀԱԶԴ

Տիկին Միմի Խաչիկեան
Տէր եւ տիկին Նշան Խաչիկեան եւ զաւակները
Տէր եւ տիկին Պասիլ Պասիլ եւ զաւակները
Տէր եւ տիկին Էլի Անաթեան եւ զաւակները
Տէր եւ տիկին Ժաք Խաչիկեան եւ զաւակները
Օրդ. Սոնիա Խաչիկեան
Տէր եւ տիկին Զրակ Ոսկերիչեան եւ զաւակները
Եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հոր, եղբոր, հորեղբոր, մորեղբոր եւ հարազատին՝

ԱԻՏԵՏԻՍ ԽԱՉԻԿԵԱՆԻ (Ծնեալ՝ Կիպրոս, 1922ին)

Մահը, որ պատահեցաւ Կիպրոսի, 28 Յունիս 2002, երկուշաբթի ժամը 9:00ին, Պեշիթի մէջ, յետ կարճատեւ հիւանդութեան:
Թուգարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Երկուշաբթի, 29 Յունիս, կէսօրէ ետք ժամը 4:00ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մարտիրոսեանի մէջ, ուրկէ Հանգուցեային մարմինը պիտի փոխադրուի Պորթ Համուտի Ազգային գերեզմանատունը:
●Ներկայս ընդունիլ իբրեւ մահապարտ:
●Յատկանութիւնները կ'ընդունուին հանգուցեային բնակարանը՝ Ռասպուէ, «Սըրիալ» հիւանդանոցին դիմաց, Երկուշաբթի 29, Երեքշաբթի 30 եւ Չորեքշաբթի 31 Յունիսին:

ՈՒԱԼԻՏ ՊԸՆ ԹԱԼԱԼ ԻՇԽԱՆԸ ԵՄ Կ'ԱՐԾԱՐԾԷ ԲԶԻՋԱՅԻՆԻ ՇԱՐՅԸ

ՍէնտակաՆ Արաբիոյ Ուալիտ Պըն Թալալ իշխանը ցաւ եւ վարմանք յայտնեց, որ վիճակը նկատելի առած են բջիջային հեռաձայնի հաստատութիւններու ապապետականացման աշխատանքին դիմագրուած քաջըլուքներէն ներս:

Իշխան Պըն Թալալի գրասենեակը իրապարակեց պաշտօնական հաղորդագրութիւն մը, որուն մէջ շեշտեց, որ իրեն պատկանող հաստատութիւնները յանձնարարած է որեւէ ձեւով միջամուխ չըլլալ նշեալ հարցին եւ յոյս յայտնած է, որ այս հարցին շուրջ ծագած բանավեճերը շուտով կ'աւարտին, որովհետեւ մեծ վնաս կը հասցնեն Լիբանանի մէջ ներդրումներ կատարելու աշխատանքին:

Իշխան Պըն Թալալ նաեւ պարմանք յայտնեց, որ առանց օրինաւոր ծրագրի մը գոյութեան ինչպէս կարելի է այսքան արագ

չեղեալ համարել երկու հաստատութիւններու համաձայնագիրները: Իսկ ինչպէս կարելի է այս օրերուն, հաղորդակցութեան միջոցներու հաստատութեանց արժեքը նուազազոյնի իջած է, ապապետականացնել բջիջային հեռաձայնի մարկը, երբ Լիբանանի պետութեան հիմնական մտահոգութիւնն է երկրին արտաքին պարտքերը կրճատել:

Իշխան Պըն Թալալ անգամ մը եւս շեշտեց «Մովեմիթ» պանդոկի բացման հանդիսութեան առիթով իր արտասանած խօսքը, թէ այնքան առեւն որ մտածուած ծրագիր եւ կազմակերպուած աշխատանք չկայ վերականգնելու Լիբանանի տնտեսութիւնը, որ կ'ընդգրկուի նաեւ ապապետականացման հարցը, ապապետականացման աշխատանքը կը մնայ դժուար, սիւսլ եւ պէտք եղած արդիւնքը չի տար:

ՄԻՇԷԼ ՍԸՄԱՀԱ ԱՅՅԵԼԵՑ ՆԱԽԱԳԱՀ ԱՍԱՏԻ

Սուրիոյ նախագահ Պաշար Ասափ երէկ ընդունեց նախկին նախարար եւ երեսփոխան Միշէլ Սըմահան:

Նշեց, որ մէկ շաբթուան ընթացքին Սըմահայի երկրորդ այցելութիւնն է նախագահ Ասափի:

ԳՐԱԻՈՒԱԾ ՕՐ
Հ.Յ.Դ. «ԳԱՐԵԳԻՆ ՆՇՊԵՇ» ԱԿՈՒՄԲԻ 3ԱՆՁՆԱԽՈՒՄԲ
ՊԱՇՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ
18 ՕԳՈՍՏՈՍ 2002

ԳՐԱԻՈՒԱԾ ՕՐ
«ՍԱՐԴԱՐԱՊՍ» ԱԿՈՒՄԲԻ ԸՆԿԵՐԱՅԻՆ 3ԱՆՁՆԱԽՈՒՄԲ
ՊԱՇՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ
25 ՕԳՈՍՏՈՍ 2002

ԳՐԱԻՈՒԱԾ ՕՐ
Ս. ԹԵԼԼԻՐԵԱՆ «ՍԱՐ ԵՈՒՄԵՑ» ԱԿՈՒՄԲԻ ԿԱՐԶՈՒԹԻՒՆ ԿԵՍՕՐՈՒԱՆ ՃԱՇ
18 ՕԳՈՍՏՈՍ 2002

ՍԱՍՈՒԷԼ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ
«ՀԱՅՐԵՆԻ ԶԱՆԱԽ» ԼՈՒՍԱՆԿԱՐԵՐՈՒ ՅՈՒՅԱԿԱՆՔԵՄ
ԲԱՅՍԱՆ ՀԱՆԻՄՈՒԹԻՒՆ
Ստիվ Կոմենայ Երկուշաբթի 29 Յունիս 2002ին, երկուշաբթի ժամը 8:00ին Համագայի խիբ Նշան Փաղանգեան ճեմարանի «Վաստիական» սրահին մէջ, Շաբաթ Եւ Պայք Պէյրութ:
Յուրանակարգը կը տեւի 29 Յունիսը 1 Օգոստոս 2002, ամէն օր երկուշաբթի ժամը 6:00էն 10:00:
ՀՐԱԵՐ

ԼԱԻԱԳՈՅՆ ԱՊԱԳԱՅԻ ՍԸ ՀԱՍԱՐ...
ԼԱԻԱԳՈՅՆ ՃԱՍՐԱՆ
POLYGLOT TECHNICAL COLLEGE

ՍԱՍՆԱԳԻՏԱԳԱԾ ԱՇԽԱՐԿԻՆ ՍԷՋ, ԸՆՏՐԷ ՍԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ ՍԸ
B. T. T. S. (B. A.)
●BUSINESS STUDIES ●COMPUTER ●EXECUTIVE SECRETARY ●TEACHING DIPLOMA
●INTERIOR DESIGN ●GENERAL DECOR ●CHIEF ACCOUNTANT ●JEWELLERY MOLDING
●COMPUTER TECHNICIAN ●TICKETING & TOURISM ●COMPUTER LANGUAGES ●ENGLISH & OTHER LANGUAGES ●MARKETING ●MANAGEMENT ●BANKING

LEARN ENGLISH ♦ Small classes ♦ Morning and evening ♦ Beginners to university level ♦ Toefl extra ♦ Direct audio visual method	EXECUTIVE SECRETARY Ոչ մէկ ընկերութիւն կրնայ գործել առանց քեպլի: Եղիթ 21րդ դարու քարտուղարուի	BUSINESS STUDIES The world's present & future is based on business studies. Be a leader in marketing, or banking.
«ՄՈՍԻ ՇՈՒԹ»Ի ԵՒ ՈՍԿԵՐԶԱԿԱՆ ԿԱՐԱՊԱՐԱՆՈՒԹԵԱՆ ԴԱՐՆԵԹԱՅԷ Կաղապարաշինութեան գծագրութիւն համակարգիչի վրայ: Ուսանողներու յաջողակ կաղապարի վաճառում: Յաջողակ աշակերտներու գործի ապահովում: Պետական վաերացումով կաղապար:	ԵՂԻՐ 21ՐԴ ԴԱՐՈՒ ՍԱՍՆԱԳԵՏ ՀԱՍԱԿԱՐԳԻՉԻ ՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ՎԱՐՊԵՏ Միամեալ գործնական դասընթացը: Պետական վկայական: Գործի ապահովում:	ՈՒՍՈՒՑԻՉԻ ԿԱՐԻԷ Կը խնդրուի դիմեն միայն անոնք, որոնք նուազազոյնը նախկին համալսարանական վկայական կամ մասնագիտութիւն:
POLYGLOT SCHOOL EMPLOYMENT OFFICE Բոլոր այն շրջանաւարտները, որոնք ցարդ անգործ են թող դիմեն POLYGLOT EMPLOYMENT OFFICE: Արձանագրութիւն՝ ամէն օր, առաւօտեան ժամը 8:00էն մինչեւ երկուշաբթի ժամը 8:00: Տորա, հեռ. 01 - 251320, 03 - 299484: Տեր եւ տնօրէն ՊԵՏՐՈՍ ԶԵՄԵՍԵԱՆ		

ՂՈՎՄԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀԸ ԽՍՏԻԻ ԿԸ ՔՆՆԱԳԻՍԵ ԿԱՐԳ ՍԸ ՄԱՐՈՆԻՆԵՐՈՒ ԿԵՅՈՒԱԾՔԸ

Ղովմի Կուսակցութեան նահապահ ժըպրան Արաժի երէկ Ռաշայայի մէջ խիստ յարձակողական ճճով արտայայտուեցաւ մարտի կարգ մը շարժումներու դէմ, պատնք կոչելով ծայրայեղականներ եւ համայնքային դրութիւն ստեղծողներ. անոնց շարքին է գլխաւորաբար Քըրնէթ Շեհուանի Հանդիպումը:

Արաժի նկատել տուաւ, որ Անթիլիասի մարտիներու առաջնորդարանը վայրն է միայն Աստուած փառաբանելու եւ ոչ թէ քաղաքական հարցեր քննարկելու:

Արաժի անդրադարձաւ երկրին մէջ տիրող մթնոլորտին, ընդգծելով, որ տարբեր կողմեր կարծիքներ ցոյց կու տան, որ Լիբանանի մէջ «տակաւին շատ գերեզմաններ պիտի փորուին»:

Արաժի կոչ ուղղեց մարտի համայնքի պատկերներուն, որ իրենց գրաւը չդնեն Միացեալ Նահանգներու օժանդակութեան վրայ, որովհետեւ արդէն իսկ Լիբանան անցեալին շատ սուղ վճարեց անոր գինը: Արաժի ընդգծեց, որ մարտի համայնքի պատկերը պէտք է հեռու մնան Լիբանանի գերիշխանութիւնը պահանջելէ, որովհետեւ ան ուրիշ իմաստ կը ստանայ եւ երկրին միութիւնը կը նուազեցնէ:

Արաժի այս խօսքերը արտասանեց Ռաշայայի մէջ Ղովմի Կուսակցութեան մէկ մասնաճիւղի հիմնադրութեան առիթով:

ՇԷՅԽ ՖԱՏԼԱԼԼԱ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԷ ԻՇԽԱՆԱԻՈՐՆԵՐՈՒՆ ՄԻՋԵԻ ՎԷՃԵՐԸ

Շէյխ Մոհամետ Հուսէյն Ֆատալլա Շաբաթ օր ըսաւ, որ պետական պատասխանատուներուն դուրս գալու ներքին հարցերու շրջագիծին եւ տեսնելու գերխնդիրները:
«Իշխանաւորներու տարակարծութիւնները վտանգաւոր են, որովհետեւ տնտեսութեան վրայ իրենց ունեցած անդրադարձներուն կողմին, սկսած են սպառնալ պետերու հարցերը մանր են», ըսաւ Ֆատալլա եւ ընդգծեց, որ շրջանային մարտադրութիւնները շատ աւելի մեծ են վտանգաւոր են քան այն մանրամասնութիւնները, որոնց

մէջ խորատու կոչուած են պետական պատասխանատուները: Ան կոչ ուղղեց իշխանաւորներուն՝ դուրս գալու ներքին հարցերու շրջագիծին եւ տեսնելու գերխնդիրները:
«Իշխանաւորներու տարակարծութիւնները վտանգաւոր են, որովհետեւ տնտեսութեան վրայ իրենց ունեցած անդրադարձներուն կողմին, սկսած են սպառնալ պետերու հարցերը մանր են», ըսաւ Ֆատալլա եւ ընդգծեց, որ շրջանային մարտադրութիւնները շատ աւելի մեծ են վտանգաւոր են քան այն մանրամասնութիւնները, որոնց

ԿՈՒՂՈՒԻ

●Հաշուապահ օրհորը մը, անգլերէն եւ համակարգիչ գիտնալը՝ պայման: Հեռ. 01-242549:

ԿՈՒՂՈՒԻ

●Շէկտորագետ BT կամ TS
Տարիք՝ 22 - 26:
Անգլերէն գիտնալը պայման:
Հ ա մ կ ա ռ զ ի չ ի windows ծրագրի ծածօք:
Կը խնդրուի ԾՎԻՆ ու դարկել
FAX: 04 - 401520
Քիտի կամ P.O.Box 96
Man-souriet - el - Metn,

Knabaz-Orient Plus
Travel & Tourism
Varna
Starting from 350\$
Including R/T ticket, 8 days bungalow, transfers, guides. Visa & taxes not included.
Cyprus 3 days 185 \$
Boat trip to Cyprus & Greece 380 \$
01.900598, 901598 - 03.258336, 256254
www.orientplus.com

STUDIO Lantern
●Կը ստանձնել ուրախ առիթներու video
Գկարահանումներ
Հեռ. 01-268866
Եւ 03-895399

ԿՈՒՂՈՒԻ

●Physicsի եւ biologyի համալսարանաւարտ դասատուներ, միջնակարգ եւ բարձրագոյն կարգերու համար, նուազագոյնը երեք տարուան փորձառութեամբ:
Դիմել՝ Ֆաթս. 04-711564, կցելով համապատասխան ԾՎՆ:
ԻՆՉ ԿԸՆԵՆ ԿԱՍ ԿԸՆԵՆ **ՓՕԼԻԿԼՈԹ**
ԲՈՒՆԻ ԵՐԶԱԿԱՆՈՒՄՆԵՐԸ
«...Միջնակարգ երկրորդ դասարանէն ընդունուեցաւ Փօլիկլօթ Թեմիթըլ Եղիթ: Չորս տարի վերջ ստացաւ պետական վաերացումով քարտուղարական վկայական: Այժմ գործադիր քարտուղարուի են 85 պաշտօնատեղերով ընկերութեան մը մէջ...»:
ՈՎՍԱՆԱ ՎԱՐԿԱՐԵԱՆ

«ՄԵՆՔ ԵՆՔ ՄԵՐ ՉԱԲԱՆՔԸ» ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ ԱԲԱՐՏԵՑ ԻՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ



Հ. Յ. Գ. ԼԵՄԻ կազմակերպած «Մենք ենք մեր Չափաքը» խորհրդաժողովը իր աշխատանքները շարունակեց Շաբաթ եւ Կիրակի օրերը: Խորհրդաժողովը ամառային Կիրակի կեսօրին: Շաբաթ օրուան նիստին ընթացքին խորհրդաժողովին մասնակցողները ներկայ գտնուեցան երեք տարբեր դասախօսություններով:

Առաջին դասախօսուն էր Լիբանանէն ընկ. Նարեկ Աբրահամեան, որ խօսեցաւ Չափաքի աշխատանքային արժեքները մասին: Ան ներկայացուց Չափաքի աշխատանքային կառուցումները՝ Վրաստանի, Հայաստանի, Թուրքիոյ, Իրանի, Ռուսիոյ եւ Միացեալ Նահանգներու համար, մեկնած իրաքանչիւր երկրի քաղաքական եւ տնտեսական շահերէն:

Ապա Մամուէլ Կարապետեան կարճ ձեռնարկ ներկայացուց հայկական Չափաքի պատմական անցեալը եւ անդրադարձաւ անոր մշակութային արժեքներուն: Ան նաեւ խօսեցաւ Չափաքի մէջ տիրող արտագաղթի մասին եւ ըսաւ, թէ անոր հիմնական պատճառը տնտեսական տագնապը չէ, այլ՝ հողի կապուածութեան պակասը, որ հետեւանք է ազգային դաստիարակութիւնը ջանքող դարձնելու չգոյութեան:

Երրորդ դասախօսուն էր Չափաք Ֆոնտի ներկայացուցիչ ընկ. Եուրա Նաույեան, որ խօսեցաւ ներկայ Չափաքի վարչական կառուցումներին եւ տնտեսական-ընկերային պայմաններուն մասին: Չեկուցումներէն ետք խորհրդաժողովին մասնակցողները ուղղուեցան Պուրճ Համուտ, ուր ծաղկեպսակ մը վետեղեցին նահատակաց յուշարձանին առջեւ:

Կիրակի օր խորհրդաժողովին մասնակցողները իրենց աշխատանքը շարունակեցին խմբակային դրուժեպատի եւ ներկայացուցին Չափաքի կրթական, մշակութային, տնտեսական եւ դաստիարակչական բարելաման համար, ինչպէս նաեւ Չափաք - Սփիւռք - Հայաստան կապը ամրապնդելու քաղաքական-յարարական պահանջները: Խմբակներու վեկուցումներէն ետք, խորհրդաժողովը որդեգրեց ընդհանուր բանաձեւ մը, Չափաքի օժանդակութեան համար Սփիւռքի երիտասարդական եւ ուսանողական միութիւններուն գործակալական մասնակցութիւնը ապահովելու ի խնդիր: Խորհրդաժողովը փակուեցաւ կէսօրին:

Խորհրդաժողովին փակումէն ետք ընկերները ուղղուեցան Այնճար, այցելեցին Այնճարի բերդ եւ ծաղկեպսակ մը վետեղեցին Մուսա Լեւոն Յուշակոթիին առջեւ: Երեկոյեան, ընկերները ներկայ գտնուեցան Հ. Յ. Գ. ԼԵՄԻ «Շափաք Միասնական» մասնակերպած Լիպպոնի ձեռնարկին:

ԼԻԲԱՆԱՆ - ԻՍՐԱԵԼ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԻՆ ՎՐԱՅ ԲԱՆՈՒՄՆԵՐ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԵՆ

Իսրայէլեան բանակի բանբեր մը Շաբաթ օր յայտարարեց, որ իսրայէլեան բանակի շրջունը ընկալած մը Ուրբաթէն Շաբաթ յուսոյ գիշերուան ընթացքին թիրախ դարձած է Իսրայէլի հիւսիսային սահմանագծի յիբանանեան կողմէն կրակոցներու: Բանբերը աւելցուց, որ Կոն կամ վիրաւոր չէ եղած եւ իսրայէլացի փոխտնտեսները հակադարձած են:

Լիբանանեան ապահովական աղբիւրներ եւ Դիմադրութեան աղբիւրներ հերքեցին այս յուրերը եւ հաւատեցին, որ սահմանին վրայ ոչ մէկ հրացանային պատահած է Ուրբաթ գիշեր, առնուապէս յիբանանեան կողմէն կամ անոր ուղղութեամբ: Նոյն աղբիւրները յայտնեցին, որ Ուրբաթ գիշեր հակաօդային գնդացիներու կրակոցներ յետեւ են, հաւանաբար Լիբանանի օդային սահմանը խախտած իսրայէլեան օդանւորու վրայ:

Միջազգային լրատու գործակալութիւններ Ֆիլիպին սպայի մը վերագրեցին իրենց այն տեղեկութիւնները, թէ Ուրբաթ կէս գիշերին գնդացիներու կրակոցներ յետեւ են եւ յուսարձակ ուղիներ տեսնուած են Լիբանան - Իսրայէլ սահմանագծին վրայ, որմէջ գիւղին մօտ, բայց յստակ չէ, թէ կրակոցները ուրկէ՞ եկած են, ուստի հետաքննութիւն բացուած է:

Իսրայէլեան հրետանին Շաբաթ առաւօտ 155 մմ. ուղիներ արձակեց Ըրպայի Նաքբար աւազանին մօտ:

Հ. Յ. Գ. ԼԵՄԻ «ՇԱՓԱՔ ՄԻԱՍՆԱԿԵՐՊԱԾ» ՄԱՍՆԱԿԵՐՊԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ

ԼԻԶՊՈՆԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՄ ՆՈՒՐՈՒԱԾ ՁԵՌՆԱՐԿ

Երեկ երեկոյեան ժամը 8:00ին, Այնճարի մէջ տեղի ունեցաւ Հ. Յ. Գ. ԼԵՄԻ «Շափաք Միասնական» մասնակերպին կողմէ կազմակերպուած Լիպպոնի նահատակներուն նուիրուած ձեռնարկ մը: Ձեռնարկին ներկայ էր 500 հոգի:

Ձեռնարկին բացման խօսքը կատարեց «Շափաք Միասնական» մասնակերպի ընկ. Յակոբ Գառնէշեան, որ ըսաւ, թէ Լիպպոնի արարքը դարձաւ «պղծանշանը այն հզօր երիտասարդութեան, որ գիտէ նահատակելի եւ իր նահատակութեամբ վառ պահել հայ ժողովուրդին ապատագրութեան քահր»: Շեշտելով, որ երիտասարդութիւնը ժողովուրդի մը հիմն է, ընկ. Գառնէշեան ըսաւ, որ «այսօր աւելի քան երբեք անտարբեր հայ երիտասարդութիւնը կարիքը ունի պարթօնքի, որպէսզի վերակենդանացնէ ազգային գիտակցութիւնը»:

Բացման խօսքէն ետք տեղի ունեցաւ Մարգիս Կիրակոսեանի «Օրհներգ մերօրեայ Ասպետներուն» բանաստեղծութեան խմբակային ամուսնը:

Օրուան բանախօսուն էր ընկ. Վերա Եագուպեան, որ խօսեցաւ Լիպպոնի նահատակներուն եւ այլ «սրբապան ինքնաբերու» նահատակութեան խորհուրդին մասին: «Այն է նահատակութեան խորհուրդը, իմացեալ մահով վերապրիլ եւ անմահանալ գալիք սերունդներու գիտակցութեան մէջ՝ միշտ յիշեցնելով ազգային ինքնահաստատման եւ մշակութային պարգացման ուղին շարունակելու Սուրբ աւանդը», ըսաւ ան:

Բանախօսը ըսաւ, թէ Հայկական Յեղասպանութենէն ետք ամբողջ տասնամեակներ հայ ժողովուրդը փորձած էր խաղաղ տարբեր միջոցներով իր ձայնը լսելի դարձնել, սակայն իբրեւ պատասխան՝ արժանացած էր մեծ պետութիւններու անտեսումին եւ Թուրքիոյ հեզանքին: Ան դիտել տուաւ, որ 1975ին բռնկած փնտալ պայքարէն ետք է միայն, որ Հայկական Յեղասպանութիւնը արժարժուեցաւ միջազգային մամուլին եւ հանրային կարծիքին մօտ: «Դժբախտաբար, Լիպպոնի անմահ ընկերներուն արիւնն այ պէտք էր հոսէր, որպէսզի միջազգային մամուլին մէջ քանի մը կարիք մէջան հոսէր մեր 1,5 միլիոն նահատակներուն դատին մասին», ըսաւ ընկ. Եագուպեան:

Բանախօսը դիտել տուաւ, որ Հայկական Յեղասպանութեան միջազգային ճանաչումը այժմ Հայաստանի անկախ պետութեան արտաքին քաղաքականութեան օրակարգի կէտերէն մէկն է, սակայն այդ մէկը չի նշանակեր, որ Սփիւռքի հայութիւնը ընկեր չունի այլեւս: Ան աւելցուց, որ Սփիւռք եւ Հայաստան պէտք է գործակցին ամբողջական Հայաստան մը կերտելու համար:

Ընկ. Եագուպեան եզրափակեց ըսելով, թէ Լիպպոնի ընկերները ֆիլիքսայէն չկան այլեւս, սակայն կան անոնց յեղափոխական ոգիով դաստիարակուած երիտասարդները՝ Դաշնակցութեան ներկայի եւ ապագայի անկեղծ փնտրողները:

Բանախօսութենէն ետք ելոյթ ունեցաւ ընկ. Մարտիկ Փայպեան, որ ջութակի ընկերակցութեամբ նուագեց «Կոմունկ» երաժշտական կտորը:

Ապա իր արտի խօսքը փոխանցեց «Մենք ենք մեր Չափաքը» խորհրդաժողովին մասնակցողներէն՝ Հայաստանէն ընկ. Յովիկ Մեծգեորգեան, որ վեր առաւ Լիպպոնի անմահութեան գործողութեան խորհուրդը, շեշտելով, որ Լիպպոնի Հիւզը կը խորհրդանշէ նուիրում, որ երբեք չի կրնար մասնակի ըլլալ, այլ՝ ամբողջական:

«Անոնք տուին իրենց երդումը Ապատութիւն կամ Մահ դրօշակին վրայ եւ յարգեցին իրենց երդումը՝ ամբողջական նուիրակաւորութեամբ», ըսաւ ան:

Իր խօսքին ամառտին, ան շեշտեց, որ շուրջ երկու տասնամեակներ իրենց խորհուրդին եւ հանդիմաններուն հետեւած սերունդները նոյն նուիրութեամբ կ'աշխատին եւ վստահեցուց, որ գալիք սերունդներուն համար այլ Լիպպոնը անպայման ըլլալ ներշնչարան:

Ընկ. Յովիկ Մեծգեորգեանի խօսքէն ետք տեղի ունեցաւ Լիպպոնի գործողութեան մասին ժամանակագրական վիտեօ - երիզի մը ցուցադրութիւնը:

Ձեռնարկը ամառտեցաւ «Մշակ Բանուոր» քայլերով:

Ի՞ՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

Տեղական մամուլը իր 27 Յուլիսի թիով գլխաւորաբար լուսարձակի տակ առած է երեսփոխան Մուսթաֆա Սաատի յուղարկաւորութիւնը, վարչապետ Հարիրիի հիւսիս այցելութեան յետաձգումը եւ Հեպրոնի մէջ 4 իսրայէլացիներու սպանութիւնը:

«Տիար» նշած է, «վարչապետ Հարիրիի հիւսիս շրջան այցելութիւնը չ'ըջեց՝ ժողովուրդին կողմէ իրեն դէմ ըլլալիք ցուցերէն խուսափելու համար», իսկ «Անուար» եւ «Մուսթաֆայ» այս մասին գրած են, թէ ան Չղարթա եւ Աքքարի շրջան այցելութիւնները չ'ըջեց՝ երեսփոխան Մուսթաֆա Սաատի մահուան սուգին պատճառով:


Լիբանանեան ներքին կեանքին մասին խօսելով «Քիֆաի Արապի» նշած է, թէ բջիջային հարցով երեք նախագահները կրնան գալ շաբաթ հանդիպիլ, եթէ մինչ այդ հարցին յարմար լուծում մը երեւան գայ: «Տիար»-ի համաձայն, նախարար Քըրտահի պատասխանեց նախարար Յիլէի հարցին իրեն դէմ կատարած յայտարարութիւններուն եւ հարց տուաւ. տնտեսութեան նախարար Յիլէի մինչեւ այսօր ո՞ր հասցուց երկրին տնտեսութիւնը: Ըստ թերթին, նախարար Քըրտահի կ'ըսէ, որ դէմ է «Էլ. Էս. Պի. Սի.» դրամատան կողմէ աճուրդի նոր պայմանագիր մը մշակման, որովհետեւ այդ աշխատանքին համար յաւելեալ 2 միլիոն տոլար պիտի ծախսուի, մինչդեռ նախարարութիւնը պայմանագրի իր տարբերակը կազմած է առանց ծախսի:

«Պայրաք» գրած է, թէ Մուսթաֆա Սաատի փոխարէն Սայտայի մէջ առանց մրցակցութեան երեսփոխան պիտի ընտրուի անոր եղբայրը՝ Ուսաման:

«Լիուա»-ի համաձայն, նախարար Նալիլ Հըրաուի արգելք չի տեսներ, որ բջիջային թղթածրարին պայմանագրով յետաձգուին, նախարար Քըրտահի դէմ է երկարաձգումին, իսկ Ղալի Արիտի լաւատես է լուծում մը գտնելու գծով: Պետութեան եւ ուսուցիչներու ներկայացուցիչներու հանդիպումին համաձայնութիւն գոյացաւ, որ պետական քննութիւններու սրբազանութիւնը սկսի երկուշաբթի օր, գրած է թերթը:

Միջազգային գետնի վրայ թերթերը գրած են, թէ պաղեստինեան «Քասսամ» կազմակերպութիւնը Կապալի մէջ սպանած իր ղեկավար փոխարինեց, առանց նոր ղեկավարին անունը յայտարարելու: Կապալի ջարդին վրէժը լուծելու ճամբուն վրայ՝ պաղեստինեան քոմանտո մը երկու ինքնաշարժներու դէմ յարձակումի մը ընթացքին սպանեց չորս իսրայէլացիներ եւ 3 ուրիշներ վիրաւորեց:

THE REVOLUTIONARY JAPANESE Air Conditioners



DYNAMIC made in Japan



I like it
Powerful
Ideal
Cool
DYNAMIC

- 9000 - 24000 B.T.U. HEAT PUMP SPLIT SYSTEMS
- EXCEPTIONALLY QUIET OPERATION
- LOW POWER CONSUMPTION, HIGH EFFICIENCY
- FULL LCD DISPLAY WIRELESS REMOTE CONTROLLED
- UNBEATABLE PRICES

GAS G. Ayanian & Sons
Dora, Tel: 255222/3/4/5/6 Cellular: (03) 627728/9
Gemayzeh, Tel: 447000 - 445429, Fax: (01) 265187 - 582357

ԱԶԳ. «ՅԱՍԱՅ - Գ. ԿԻՒԼ ՊԵՆԿԵԱՆ»
ԵՐԿՐԴ. ՎԱՐԺԱՐԱՆ

ՏՆՕՐԵՆԻ ԿԱՐԻՔ

Ազգ. «Յառաջ - Գ. Կիւլպենկեան» երկրորդ վարժարանը կարիքը ունի վկայեալ տնօրէնի մը: Փափաքողները իրենց դիմումները կրնան ներկայացնել վարժարանի խնամակալութեան: Ըն. 08-620616 Fax: 08-620614

ԽՆԱՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ

ՏԱՐԵՂԱՐՁԻ ԼԱՄԱԳՈՅՆ ՆՈՒԵՐԸ

ԱՅՍ ԱՄԻՍ ՅԱՏՈՒԿ ԳԻՆ ԲՈՒՆՈՐ ԱՍՏՈՎ ՍԿՈՂ ԱՆՈՒՆԵՐՈՒՄ. ԿԵՍ ԺԱՄՆՈՅ VIDEO CLIPՆԵՐ ԱՆՁԻՆ ԱՆՈՒՆՈՎ, ՄԱԿԱՆՈՒՆՈՎ ԵՒ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵԿԱՐՆԵՐՈՎ

Դիմել՝ ԱՐԱ ԲԵՔԵՃԵԱՆ ՎԱՍ. Ըն. 01 / 261696, 03 / 250518

ԱՄԱՌՆԱՅԻՆ ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԾՐՋԱՊՏՈՅՑ

ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ 22 ՕԳՈՍՏՈՍԷՆ 5 ՍԵՊՏԵՄԲԵՐ

Կազմակերպութեամբ՝ ՈՒՐՅԱՅԻ ՀԱՅՐԵՆԱԿԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

• ԱՆԿՐԿԵԼԻ ՅԱՅՏԱԳԻՐ
• Սակ մէկ անձի՝ 800 \$

Արձանագրութեան համար դիմել՝ **ՏՈՔՅ. ՍԿՐՏԻՉ ԳԵՆՐԳԵԱՆԻ.** Ին. 01-253627, 03-207153, Fax: 01-261221:

ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

ԵՐՈՒՄԱՐԹԻ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԸՈՂԵՐՈՒ ԲՈՆԱԳՐԱԿԱՆ ԸԱՐՑ

ԵՐՈՒՄԱՐԹԻ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԳԼԽԱՑԱԻՐ ՊԱՐՈՆՏԷՐԻ ԱՄԱՐԱՆՈՑԻՆ ՀԱՐՑՈՎ

Անցեալ տարուան Մայիս ամիսէն ի վեր իսրայէլեան բանակը սկսած է թափանցել Պարոնտէրի ամառանոցի սահմաններէն ներս, այնտեղ պաղեստինեան ճամբարներու դէմ պաշտպանութեան բերդ մը կառուցելու նպատակով: Առաջին առթիւ արդէն իսրայէլեան ուժերը խորտակած էին պատը եւ հրատարակեցին ամառանոցի մասին տեղեկութիւններ: Այդ շրջանին պատրիարքարանը ճշդեց, որ 77 հազար տղարի վնաս արձանագրուած էր այդ ոտնձգութեան պատճառով: Հայոց պատրիարքարանը Սեպտեմբեր 2001ին դիմեց իսրայէլի պաշտպանութեան նախարարութեան՝ պահանջելով, որ վնասը հատուցուի եւ բանակը դուրս բերուի Պարոնտէր ամառանոցէն: Բայց ո՛չ միայն նամակին պատասխան չտրուեցաւ, այլեւ՝ բռնագրաւումը շարունակուեցաւ: Երուսաղէմի հայոց պատրիարքարանը Դեկտեմբեր 2001էն սկսեալ, Յունուար եւ Մարտ 2002ին գանազան դիմումներ կատարեց եւ գրեթէ ոչ մէկ պատասխան ստացաւ:

21 Ապրիլ 2002ին իսրայէլի պաշտպանութեան ուժերը Պարոնտէրի կալուածին մէջ սկսան կառուցել ճամբայ մը, որ կը սկսէր Ժիլոյէն եւ կ'անցնէր Պարոնտէրի կալուածին մէջէն, որուն մէջ կը գոյացնէր երկու փոքրիկ բաժնիներ, որոնք երկուքն ալ այլեւս անօգուտ կը դառնային: Բանակային ուժերը ճամբան կառուցելու ընթացքին քանդեցին գերեզմաններ, հնագիտական արժէքներ եւ ճգմեցին նաեւ ձիթենիներ, որոնք հարիւրաւոր տարիներու հնութիւն ունէին: Պատրիարքարանի ներկայացուցիչ Տայր Բագրատ Պրոքորեան դիմում կատարեց պաշտպանութեան նախարարութեան եւ բանակի ներկայացուցիչ - հրամանատար Ամիթայ Լեւիի: Այս վերջինը յայտնեց, թէ ճամբուն կառուցուելու առժամեայ է, եւ անմիջապէս որ ընկեր վերագտնէ իր անդորրութիւնը, բանակը իր նախկին վիճակին պիտի վերադարձնէ Պարոնտէրի կալուածը: Իսրայէլացիները խնդրեցին նաեւ, որ պատրիարքարանը Պարոնտէրի կալուածը տրամադրէ իսրայէլեան բանակին, որպէսզի այդ կալուածը գործածուի իբրեւ բանակատեղի: Պատրիարք հայրը մերժեց: Զինուորականները յայտնեցին, թէ գրաւոր կերպով ալ խնդրանք պիտի ներկայացնեն այս մասին: Բայց յետոյ այդ դիմումը չկատարեցին: Տեսնելով, որ արդիւնք չի տար, Երուսաղէմի պատրիարքարանը Մայիսին գանգատի նոր նամակ մը յղեց իսրայէլի պաշտպանութեան նախարարութեան եւ դիտել տուաւ, որ հազար մեթր երկարու-

Օրին հաղորդեցինք, որ իսրայէլեան բանակը բռնագրաւեց Երուսաղէմի պատրիարքութեան ամառանոց Պարոնտէրի կալուածը, որ առաւելաբար կը ձանջուի Երուսաղէմի Պարոնտէր Գանձակեցի Ծիմարար պատրիարքին անունով: Ընագիտական արժեքներով, դամբարաններով, 1600 ձիթենիներով եւ այլ հարստութիւններով նշանաւոր այս կալուածը երկար տարիներ ի վեր Երուսաղէմի պատրիարքութեան հոգեւորականներու կողմէ կ'օգտագործուէր իբրեւ ամառանոց եւ հանգստավայր:

Պոլտոյ «Մարմար» օրաթերթը այս մասին պատրաստած է ընդհանուր տեղեկատուութիւն մը՝ իր աղբիւրները քաղելով պատրիարքութեան անգլերէն մէկ հաղորդագրութենէն, հայրենի «Ազգ» թերթն էլ «Կռուճկ» լրատու գործակալութեան համացանցի կայքէն:

Ստորեւ կու տանք այդ տեղեկատուութիւնը:

Թեմաւ ճամբայ մը բացուած է պատրիարքարանի կալուածին մէջ եւ ատիկա մեծ վնաս պատճառած է: Պատրիարքարանը պահանջեց, որ բանակը ետ քաշուի եւ հրաժարի յաւելեալ նոր վնասներ պատճառելէ: Այս բոլորէն ետք, իսրայէլի պաշտպանութեան նախարարութեան ներկայացուցիչ Շամուէլ Համպուրկէր 23 Յունիսին յղեց հրամանագիր մը, ըստ որուն, իսրայէլեան ուժերը ձեռք կը դնէին Պարոնտէրի կալուածին վրայ: Պատրիարքարանը կրկին ու կրկին դիմում կատարեց եւ իր փաստաբան Մագէն Քպտիի միջնորդութեամբ ընթացք տուաւ անհրաժեշտ բոլոր ձեւակերպումներուն: Բայց մինչեւ 14 Յունիս յուսադրիչ որեւէ արդիւնք չէր ստացուած: Երուսաղէմի պատրիարքարանը որոշեց թէ՛ լրատու միջոցներով եւ թէ՛ դատարանի միջոցներով պաշտպանել իր իրաւունքները:

Պարոնտէրի ամառանոցի հարցը հրատապ կարեւորութիւն ստացաւ նաեւ հայ մամուլին մէջ: Այս մասին Հայաստանի «Ազգ» օրաթերթը կը հաղորդէ հետեւեալը.

Ինչպէս արդէն կ'ակնկալուէր, Երուսաղէմի հայոց պատրիարքութիւնը յայտարարութիւն մը չհրատարակեց Յաւալի կողմէ Բեթղեհէմի վանքապատկան ձիթենիներու այգիներուն բռնագրաւման գծով: Ուստի կարելի է միայն ենթադրութիւններ ընել այս հարցին նկատմամբ իսրայէլի Գերագոյն Դատարանի որոշումին մասին: Իսրայէլի արտաքին գործոց նախարարութիւնը արդէն բացատրական նամակ մը յղած է Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան, իսկ Վարդան Օսկանեան մեկնաբանելով Պարոնտէրի վանքապատկան այգիներու բռնագրաւման հարցը՝ նշած է, որ Հայաստան դիւանագիտական բոլոր միջոցներով կը փորձէ պարզել իրավիճակը եւ այդ քայլին նպատակը:

Աւելորդ չենք նկատել յիշեցնել, որ հայկական կալուածներու առնչութեամբ Երու-

սաղէմի հայոց պատրիարքարանն ու իսրայէլի իշխանութիւնները նախորդ տարիներուն եւ տասնամեակներուն միշտ ալ վէճեր ունեցած են իրարու հետ եւ սակայն միշտ ալ «եղբ» մը գտած են: Այսպէս, Երուսաղէմի կալուածներուն մէկ մասը այսօր կը գտնուի իսրայէլի պետութեան տնօրինութեան ներքեւ: Եթէ Երուսաղէմի մէջ լոյս տեսնող «Քուրտ» պարբերաթերթը իր 12 Յունիսի թիւով այս մասին լուր մը չհրատարակէր, եւ եթէ այս լուրը քանի մը օր ետք թարգմանաբար լոյս տեսնէր, հայկական լրատուամիջոցներու մէջ, մենք թերեւս միայն ամիսներ, նոյնիսկ տարիներ ետք պիտի տեղեկանայինք այս մասին: Նոյնը պատահած է նաեւ վանքապատկան բազմաթիւ կալուածներու պարագային:

Միւս կողմէ, «Կռուճկ» լրատու գործակալութեան համալսարանի կայքը հետեւեալ տեղեկութիւնները հրատարակած է Բեթղեհէմի վանքապատկան այգիներուն եւ անոնց բռնագրաւման մասին.

«Պարոնտէրի ձիթենիներու այգիները հայոց պատրիարքարանին կողմէ գնուած են 1641ին: Այգիներուն մօտ կը գտնուէր նաեւ պատրիարքին ամառանոցը: Այգիին մէջ կային մօտաւորապէս 1800 ձիթենիներ: Հետագային հայ վանականներ ճգնաբաններ կառուցած էին այգիին մէկ մասին մէջ, եւ մինչեւ վերջերս Պարոնտէրի այդ ճգնաբանները կ'օգտագործուէին Սրբոց հակորեանց միաբանութեան կողմէ՝ աշխարհէն մեկուսանալու համար: Հետագայ դարերու ընթացքին հոն թաղուած են քանի մը պատրիարքներ: Իսրայէլի իշխանութիւնները, առանց հայոց պատրիարքութեան հետ խորհրդակցութիւններ ունենալու եւ առանց իրենց գործողութիւններուն մասին տեղեկ պահելու պատրիարքարանը, քանդած են Երուսաղէմի պատրիարքին ամառանոցին կից պատնէշը եւ այգիին ճամբան՝ արմատախիլ ընելով հարիւրաւոր ձիթենիներ: Իսրայէլեան բանակը պարսպ կառուցելու նպատակով բռնագրաւած է այգիներուն մէկ երրորդը:

«Ըստ իսրայէլեան նախագիծին, կառուցելի պարսպը զիկզկի ձեւ պիտի ունենայ, ուստի կալուածը այլեւս անգործածելի պիտի դառնայ:

«Եթէ իսրայէլի բարձրագոյն ատեանը պատրիարքութեան ի վնաս վճիռ մը հրատարակէ, հայոց պատրիարքութիւնը դիմում պիտի կատարէ միջազգային ատեաններու մօտ եւ բողոքի ցոյցեր պիտի կազմակերպէ»:

ՏԱՐՈՐԻՆԱԿ «ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐ»

Երուսաղէմի հայոց պատրիարքարանին պատկանող Բեթղեհէմի վանքապատկան այգիներին գաւթումը իսրայէլեան բանակի կողմից եւ պաղեստինցիներին մեկուսացնող պատ կառուցելու պատրուակով այդ տարածքը սովորական գորանոցի վերածելու փաստը իսրայէլի պետութեան հերթական ոտնձգութիւնն է յաւերժական քաղաքում հայ եկեղեցու նիւթական եւ հոգեւոր արժէքների հանդէպ:

Յայտնի է, որ բուն Երուսաղէմում եւ նրան

ցանկացած գերտէրութիւն: Բաւական է նշել, որ բուն կամ հին Երուսաղէմում, որը բաղկացած է 6՝ հրէական, արաբական, քրիստոնէական եւ հայկական թաղամասերից, մեր եկեղեցին եւ նրան ներկայացնող Երուսաղէմի հայոց պատրիարքարանը ոչ միայն 1500 քմ. տարածք զբաղեցնող հայկական թաղամասի տէրն է, այլեւ համաքրիստոնէական կարեւորագոյն սրբաշայլերի հանդէպ ունի նոյն իրաւունքները, ինչ որը կաթոլիկ եւ որը ուղղափառ եկեղեցիները: Դա Հայաստանեայց Առաքելական եկեղեցու համաքրիստոնէական մեծ ընտանիքում ունեցած առանձնատուր ղեկի վկայութիւններն են, որը ձեւաւորուել է պատմականօրէն՝ շնորհիւ Երուսաղէմում ժամանակին հաստատուած մեր նախարարական տների թողած հարուստ ժառանգութեան եւ հետագայում՝ Երուսաղէմի հայոց պատրիարքների ծառայած բեղմնաւոր գործունէութեան, որոնք Երու-

սանիքի իրաւունքի լիիրաւ անդամ դառնալուց յետոյ, նման երեւոյթներին շարունակուելու փաստը աւելի քան տարօրինակ է, քանզի Հայաստանի Հանրապետութիւնը որպէս համայն հայութեան հերթի միակ իրաւատէր ներկայումս կարող է նոյնպիսի ազդու միջամտութիւն ունենալ իսրայէլում բնակողող իր հայրենակիցների օրինական իրաւունքների պաշտպանութեան հարցում, ինչպէս Իսրայէլն է գործադրում աշխարհի ցանկացած կէտում որեւէ հրեայի հետ կատարուող որեւէ անարդարութեան պարագայում:

Այս պայմաններում զարմանք ու նաեւ տարակուսանք է յարուցում Երուսաղէմի հայոց պատրիարքարանի հանդէպ կատարուող հերթական ոտնձգութեան փաստին մեր արտաքին գործոց նախարարութեան լուր ու մունջ վերաբերմունքը: Նոյնը վերաբերում է նաեւ Ս. էջմիածնի որդեգրած «հետեւե-

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ՓՈՐՉՈՒՄ Ե ԿԱՆԽԵԼ ԻՐ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԲՈՒՆԱԳՐԱՒՈՒՄԸ

Հայ Առաքելական եկեղեցին, Սուրբ Հոգեի ամենահիմնուրոց եւ հարուստ եկեղեցիներից մէկը, փորձում է կանխել Երուսաղէմի եւ Պաղեստինի Բեթղեհէմ քաղաքի միջեւ անվտանգութեան պատի կանգնեցման նպատակով Իսրայէլի իշխանութիւնների կողմից իր տարածքների բռնագրաւումը: Այդ մասին հաղորդել է բրիտանական «Ֆայնէնչըլ թայմս» թերթը:

Հայկական համայնքի առաջնորդներն Իսրայէլին մեղադրում են նրանում, որ եկեղեցուն պատկանող տարածքների գրաւումն ուղղուած է ոչ թէ երկրի անվտանգութեան բարձրացմանը, ինչպէս պնդում են Իսրայէլի իշխանութիւնները, այլ Յորդանան գետի Արեւմտեան ափի իր սահմանների ընդլայնելու փորձ է: 140 հազար քառ. մեթր հողատարածքի եւ այստեղ աճող 1600 ծառերի ցանկատագիրը գտնուում է Հայաստանի կառավարութեան սեւեռուն ուշադրութեան կենտրոնում: Մասնաւորապէս, Երուսաղէմում Հայաստանի իշխանութիւնների ներկայացուցիչը դիմել է Շիմոն Փերեսին՝ պահանջելով ներխուժման փաստը ցանցել որպէս Հայ Առաքելական եկեղեցու իրաւունքների խախտում:

Կառուցուող 40 մեթր երկարութեամբ պատնէշը պետք է անցնի Հայ Առաքելական եկեղեցու տարածքի երկարութեամբ: Պատնէշը կը դառնայ Պաղեստինի աճաբեկչութիւնը կանխելու նպատակով Յորդանանի Արեւմտեան ափի եւ Երուսաղէմի շուրջ կառուցուող 350 քմ. երկարութեամբ պատի մի հատածը: Հայ պատրիարքը հողերի բռնագրաւման մասին Իսրայէլի պաշտպանութեան նախարարութիւնից տեղեկացում էր ստացել դեռեւս անցեալ ամիս: Յօդուածում նշուում է, որ Հայ Առաքելական եկեղեցու ղեկավարութիւնը ենթադրում է, որ հողերի բռնագրաւման հիմնական պատճառը Յիսուս Քրիստոսի գերեզմանին միանձնեայ մուտքն ապահովելու Իսրայէլի ցանկութիւնն է: Հայ եկեղեցին պակամայ յայտնուել է տարածքային պայթիւնակալութեան վեճի կենտրոնում:

«Ֆայնէնչըլ թայմս» թերթի պնդմամբ, Իսրայէլի գլխաւոր ռաբիններ Աշքենազից եւ Սեֆարաիթը որոշում են կայացրել այն մասին, որ Սուրբ Գերեզմանը պետք է մնայ Իսրայէլի ձեռքում՝ հակամարտութեան կարգաւորման եւ սահմանների որոշման ցանկացած տարբերակով:

Իսրայէլի բանակը ոչնչացրել է մի քանի տասնեակ ձիթապտղի ծառեր: Եռայրկ շէքը, որտեղ ապրել են եկեղեցու պատանդները, վերածուել է զինուորական ուղեկալի: Իսրայէլի պաշտօնեաները ժամանակաւորապէս դադարեցրել են պատնէշի շինարարութեան աշխատանքները: Հայաստանի ներկայացուցիչների հետ հանդիպումների ընթացքում Երազք բազմիցս յայտարարել են, որ բռնագրաւման կարգաւորութիւններն անդառնալի են: Եկեղեցին պատասխանել է Իսրայէլի Գերագոյն դատարան դիմելով:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ»

ԸՆՏԱՆԻՔԻ ԲՈՒՈՐ ԱՆՂԱՆԵՐՈՒՆ ԱՌՈՂՁՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ՄՏԱՀՈՎՈՒԹԻՒՆՆ

SHOWER CABINE CENTER

Ձեր լոգանքի վարպետները Bac a Douche et Bainoire փոխարինեցէք շարժական ալիւմինիում եւ փլասթիք կազմածներով, որոնք հիմնուած են բոժկակաւորած ընդունուած միջազգային փափանիչներու վրայ ապահովելով մորթային եւ այլ հիւանդութիւններու մանրէներէն: Այլազան չափեր, մտաչելի գին, տեղադրելը՝ ձրի, եւ երաշխաւորուած աշխատանք:

Դիմել՝ ԹԱՂԵՍ ԷԼՍԱՅԵԱՆ հաստ. Սրտ էլ Պաուշիէ, Բամիլ Շամուն պողոտայ: Հեռ. 03-392088 եւ 03-476018:

Հայկական Ներքեր

ՄԱԹԻ ՄԷՉ ՊԱՀՈՒՄԾ ՊԱՏԿԵՐՆԵՐ

ՇՐՋԱՆ ԲԱԶԷ ԽԱՉԵՐԵԱՆԻ «ԱՐԳՄԱ.100 ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ» ԼՈՐԱՍԻՊ ՊԱՏԿԵՐԱԳԻՐԸ ԺԱՊԱԿԵՆԵ ՍԸ ԲԱՂՈՒՄԾ ՏԵՍԱՐԱՆՆԵՐՈՒ ԱՆՄԻՋԱԿԱՆՈՒԹԵԱՄԲ ԿԸ ԸԱՄԱԿԷ ԶԱՅՆ ԹԵՐԹԱՍՈՂԸ

Ժպտաղէմ եւ սիրուն աղջնակի մը աչքերուն ծիածանին մէջ կը բացուի արցախեան բնաշխարհը: Ձեռնափայտի մը վրայ խորշոմած եւ կաշեկերպ ձեռքեր ամուր սեղմուածով կը միտան իրբեւ տատիկի եւ պապիկի լուսանկարչական յուշարձան: Իրարու թիկունք տուած ազատամարտիկներ հարազատութիւն մը կը յիշենք իրենց յար եւ նման դիմագիծերով եւ կը յուշեն տասնամեակ մը առաջ կերտուած յղթներուն պատմութիւնը:

«Արցախ. 100 լուսանկարներ» եռալեզու բացատրութիւններով լուսանկարչական գիրքը կը բացուի այս պատկերներով: Անիկան ստեղծուած է Արցախի անկախութեան եւ կը պարփակէ լուսանկարներ՝ քանատաճայ լուսանկարիչ Հրայր Բազէ Ռաչբեանի ստուար հաւաքածոյն, զոր ան կազմած է վերջին 10 տարիներուն՝ բազմաթիւ այցելութիւններ կատարելով դէպի Արցախ: Գիրքը հրատարակուած է 2002 Մարտին, 2-8-րդ շաբաթուածներէն ստեղծուած Եւրոպայի կերտնական կոմիտէին հովանաւորութեամբ: Վաճառքին հասոյթէն գոյացած գումարը պիտի յատկացուի Ստեփանակերտի մէջ հիւանդանոցի մը վերաբուժական բաժանմունքը կառուցելու նպատակին:

Արցախի պատերազմի եւ խաղաղութեան տարիներու առօրեայ կեանքին սեւ ու ճերմակ պատկերները ժպտակէն մը քաղուած տեսարաններու անմիջակայնութեամբ կը համակեն պատկերազրիքը թերթատողը: Կարելի չէ արագ դարձնել անոր էջերը: Քանի մը լուսանկար տեսնելը բաւարար է ճանչնալու համար արուեստագէտ լուսանկարիչ մը, որուն ներշնչումը կող գայ իր ազգի մէջ մարդկային շատ թանկագին եւ կորուստի վտանգը դիմագրաւող բան մը արձանագրելու ձգտումէն: Անոնք նաեւ կը պատմեն լուսանկարիչին կատարելապէս կը փնտռելու, տեսնելու եւ զայն իր ոսպնեակէն անցնելու հրճուածքին. մասին:

Դէպի դպրոց քաղաղ աշակերտներ երկար ստուեր մը կը ձգեն իրենց ետին՝ գծելով իրենց կտրած ուղիի ճանապարհը դէպի ապագայ: Հետագայ էջերուն մէջ նման մանուկներ պիտի երեւին ինքնազգային ժպտով, իրարու նեցուկ կանգնած, չարաճճի կամ տրտում նայածքով, վճռակամ կամ արցունքոտ աչքերով, Շուշիի մէջ երգախումբ մը թնդացնելով: Պատմական իւրաքանչիւր փոփոխութիւն անխուսափելիօրէն իրեն հետ կը բերէ նաեւ կորուստ. ումանք ազատամարտիկներու որբեր են, ուրիշներ աւելի բախտաւոր են եւ հասակ կը նետեն երկիրը պաշտպանող իրենց Տարբերու բազմակններուն մէջ: Ծիւղ է, որ պատերազմը իր հետքերը ձգած է, սակայն խամաճիկները դարձեալ մանուկներուն հերոսներն են, մանչերը դարձեալ ձեռնարկային խաղեր կը հնարեն: Արցախի յաղթանակը կ'արտացոլայ Հաղորդութի մէջ դպրոցին մուտքին Մետրոպ Մաշտոցին եւ անոր այրեանարանին քովէն անցնող դպրոցականներուն առոյգ երթին մէջ: Իրենց մագրուած վրայ ծաղկեփունջ կրող աղջնակներ եւ փողկապով մանչեր տիպար աշակերտի չափանիշներ կ'արձանագրեն կոկիկ շարուած գրասեղաններու ետին: Հիւանդանոցի մը կանխահաս ծնունդներու բաժանմունքին մէջ իր կեանքին կառուցող նորածինը ինքնին կը խորհրդանշէ Արցախի գոյատեւելու կամքը:

Հրայր Բազէի լուսանկարները կարելի է «կարդալ» յուշագրութեան մը պէս: Անոր պարզ եւ թւրեղ ոճը փրկիտփայլական մարզանքներու ճշտումին տակ չի դնէր դիտողը: Անոր իրապաշտ լուսանկարները կը պեղեն Արցախի բնակիչներուն առօրեան եւ կը դառնան համեստ, բայց խորիմ կերպարներու ուսուսանիրութիւն մը՝ կեանքի յաւերժական երեւոյթներուն լաւատես մէկ հաստատումը կատարելու համար: Լուսանկարիչը ձեռքով մը կը նոյնանայ «Մեծաւոր հպարտութիւն» վերնագիրով լուսանկարին մէջ պատկերուած ծերունիին հետ, որ անոնցի ապակի մը իրբեւ խո-

շորացոյց բռնած՝ լայն բերբրով կը դիտէ աշխարհը:

Մանուկներ, պատանիներ, երիտասարդներ, տատիկներ ու պապիկներ կը հիւսեն կեանքի դիւցազներգութիւնը ծնունդէն մինչեւ հարսանիք ու մահ: Արցախի ծերունիները հին աշխարհի յատուկ ազնուականութեամբ կը պայքարին խաւարին դէմ: Անոնց դէմքին խորշոմները նոյնինքն արցախեան լեռնաշխարհին բարձրութիւններն ու խորութիւնները կ'արտացոլեն իրենց ցցուն աշտուկներով, խոր ինկած շուրթերով եւ աչքերէն վար բացուած կ'օսներով: Լուսանկարիչը գանոնք տեւաբար կը հակադէմ մանկական մտադաշտ ու թարմ դիմագիծերու հետ, ոչ միայն շեշտակցութեամբ մար կեանքի բնական ընթացքը, այլ նաեւ՝ հիւսելու անոր գեղեցկութեան նուիրուած գեղօն մը: Ծառի ճիւղերու իր բերու իմաստուն փայտով կրող տատիկը քովի էջին մէջ պատկերուած մանչերուն նման փոքր էր ժամանակին. անոր կըր աչքերը ժամանակին գեղեցիկ ըլլալու էին: Լուսանկարիչը վաղանցուկ մանկութեան մտաւորապաշտ մէկ պատկերումը կը կատարէ մշուշի մէջ պահելով մտէն նկարուած մանուկներուն դէմքերը, մինչ տատիկին ինքնագոհ կեցուածքը կը մրցի գարմացական նայուածքով մանուկի մը յստակ դիմագիծին հետ: Կարծեք լուսանկարիչը ըսել կ'ուզէ՞ կը կարծենք, թէ ծերութիւնը տխուր վիճակ մըն է եւ մահը՝ սարսափելի, սակայն այդպէս չէ, ոչինչ կը մեռնի, այլ պարզապէս կը վերածնի տարբեր մարմին մը մէջ, կանաքէ շարունակականութիւնը ապահովելու համար: Ծերութիւնը անցեալն է, որ կ'ապրի, եւ մանկութիւնը՝ ներկան, որ կը շարունակուի:

Իրօք, գոյատեւումի փառաբանութիւնը Հրայր Բազէի լուսանկարներուն մէջ կը կրկնուի ուժեղան դիւթերգի մը պէս: Լեռներէն վեր մագլցող գիւղերու բնակիչներ մեզի կը նային իրենց թաւ յոնքերուն տակէն, որոնք խոր շուքեր կը փորեն լեռնային արեւուն տակ, ինչպէս՝ «Ռուստեմ կ'որսայ իր ազատագրած գիւղի շուրջ» եւ «Ես ծնած եմ այստեղ» լուսանկարներուն մէջ: Նոյնատիպ գլխարկներով կորաքամիկ ծերունիներ նախապետական բանակի մը պէս շարուած են պատի մը տակ եւ իրենց ցուպերուն լեռնային չափարտութեամբ կը փորձեն կարելի չափով ուղիղ պահել իրենց թիկունքը. լուսանկարը արդարօրէն կը կոչուի՝ «Մաստու ուժ»: «Մեծը եմք մեր քարերը» կ'ըսեն իրենց բնակարաններուն կառած տարեց արցախցիներ:

Ակներեւ է, որ Հրայր Բազէ լուսանկարչական իր ուղեւորութիւնը կը կատարէ լեռնաշխարհի մը մէջ, ուր կը շրջի իրբեւ տնցի, եւ որուն կապուած է անսահման սիրով: Թերեւս այս ձեռով կարելի է բացատրել անոր լուսանկարներուն կախարդական իրապաշտութիւնը, որ գրական համայնուն ոճին պէս սովորականը հրաշալկերպ կը դարձնէ արտացոլացնելով գոյութեան կանոնութեան գաղտնիքները եւ կեանքի թրոնաբանութիւնը: «Թոնիրը» ամէնէն գրաւիչ լուսանկարներէն է, որուն մէջ կը խտանան այս բոլորը: Անիկա կը պատկերէ մայրիշխանական կերպար մը՝ ծալապատիկ նստած թոնիրին առջեւ, որուն շուրջ հացը շարուած են: Լոյսը կ'իյնայ կնոջ դէմքին՝ հակադրուելով թոնիրին մէջ խորացող մթութեան: Արցախի մէջ կեանքը դարձեալ ի վեր կը վերածնի մայր հողին ընդերքէն, անոր արգասաբեր եւ կենարար ուժէն: Այլ էջի մը մէջ տարեց այլ կին «Հանապազօրեայ հացը» ուսին կը տանի նուիրական ընծաբերութիւն պէս... Արցախի խիզախ կեցուածքով հովիւր, բա-

նակի գինուորը, պիւր մկաններով ձկնորսը, պատ ծեփողը, սափրիչը, աղամանը տաշողը, դերասանը, գեղանկարիչը եւ գորգ հիւսող կիները՝ իրենց գլխուն վերեւ լուսամփոփի պէս կախուած կ'իյնան, եւ բոլոր գիտակից՝ գիւրենք դիտող լուսանկարիչին հետաքրքիր աչքերուն, կարծէք կ'ըսեն՝ կեանքը լաւ է Արցախի մէջ: Անոնցմէ իւրաքանչիւրը ունի իր պատմութիւնը, որ ծանօթ կը թուի ըլլալ, սակայն միաժամանակ՝ խորհրդաւոր:

Արցախի հիւսիսէն հարաւ գիւղերու եւ քաղաքներու համայնապատկերներ կը սփռուին պատկերագիրքին էջերուն մէջ եւ թատերական զգացողութիւն մը կ'առնեն, մասնաւոր՝ իրենց մէջ ծաւալող շարժումով, մարդկային վիճակներով եւ պատմութեան թաւալումով: Լաչիի վերանորոգուած ոլորապտոյտ ճանապարհը կը խտացնէ մայր երակէ մը տարածուող ուժը: Լայն մայրուղին համահայկական ջանքերով կառուցուած յաղթանակի կամարի նման կ'առաջնորդէ դէպի բարձրաբարձր ըլուրներ եւ անոնց գազաթններէն վար սլացող հիւղակներ: Պաքուէն գաղթականներ իրենց հետ բերած են յուշեր եւ առանձնութիւն: Լուսանկարի մէջ պատկերուած լուսանկարներ կը պատմեն կորուսեալ սիրելիներու մասին: Տատիկի մը ընկալմամբ անոր փայտէ նստարանն է բաց երկնքի տակ եւ ամբողջ հարստութիւնը՝ ծածկոց մը, ձեռնափայտ մը եւ զոյգ մը հնամաշ կօշիկ ու գուլպայ: Գոտիչի վանքը հողմերու պատանդը կը թուի ըլլալ լեռի ճիւղերու ետին, մինչ Դրբ դարուն կառուցուած Միջերկրագետի խաչ պարզած՝ Միւղբուսէ վերանորոգելի իր կոտորած թեւերը: Քերթաշարի մէջ դամբարանն է պոկուած եւ ազերիական տան մը պատին միահիւսուած երկու սուրբերու քանդակ մը կը վկայակոչէ անտեսուած ողբերգութիւն մը:

Լուսանկարներուն այլազանութիւնը ինքնին ցուցանիչն է արցախեան աշխարհի իւրաքանչիւր երեւոյթը անսահման սիրով ու նուիրածով արձանագրելու բուն ցանկութեան մը: Հրայր Բազէ որբան երկար քայլած է այս աշխարհին մէջ եւ ինչպիսի՞ բերք հաւաքած է զայն լոյսով ցօղելու համար: Գանձաւոր փայտը ամպերուն մէջ հայող լիալուսին մը տակ կը սպասէ արշալոյսին: Ուրիշ օր մը եկեղեցիին պատերուն եւ գմբէթին պատուհաններէն շեղ կոտորածներով գետին գամուող ճառագայթները երկինքի ու երկրի առանցքը կը գծեն: Անոնք հաւատքի վերածնունդով վառած մոմերու ցոլքին հետ կը դառնան դերապատար՝ պատարագի ծէսին մէջ: Շուշիի Ղազանցեցող եկեղեցիին մէջ քրիստոնէական գարմանահարչ պատկերը կ'ըսեն իր անուանողը: Երբ վերանորոգուած եկեղեցիին գմբէթէն «տեղացող» լոյսը կը հանդիպի խաչաձեւ պատուհանին դէպի երկինք խոյացող լուսեղին անցքին: Հրայր Բազէի արուեստին գրաւչութեան գաղտնիքը լոյսին յաւերժութիւնն ու գորութիւնը ճանչնալու եւ զայն մուծին հակադրելու մէջ է: Հայ գինուորը իր մարտկոցին նեղ պատուհանին եւ իր գէնքին նշանոցին մէջէն կը դիտէ դէպի սահմանային շրջաններ տարածուող լոյսը: Քերթաշարի կիրճին երկայնքին սողացող խաւարին մէջ ըլուրներն ու ամպերը կը գրեկն բոցավառ լիալուսին մը: Իրօք, նոյնիսկ ամէնէն տրտում լուսանկարները կը փառաւորեն լոյսին յաղթանակը: Կիւլիստանէն ճողոպրած կնոջ մը վշտահար դէմքին կէսը մուծի մէջ է, սակայն լոյսը բալասանի նման տարածուած է անոր դէմքին միւս կէսին վրայ եւ կնոյ տրտմութիւնը տեղի կու տայ անոր տոկունութեան:

Ստեփանակերտի շէնքերուն միջեւ կամ ազատագրուած Շուշիի հնամենի մէկ տան դիմաց երկար թեւերու վրայ ծածանող լուսեղները բնական են վերադասուելու կեանքի գուարթ մթնոլորտ մը կը ստեղծեն իրենց կոկիկ շարուածքով: Ծառի մը վրայ թառած մանուկներ թատերական իրադարձութեան մը պէս կը դիտեն Հայաստանի նախագահին այցելութիւնը եւ անոր շուրջ հաւաքուած մտահոգ մարդիկը: Անձկնութեան եւ երգիծանքի հաւասարակշռուած ալիքներ կը ծաւալեն պատկերագիրքին էջերուն մէջ՝ գոյութեան կանոնութեան երկուութիւնները մէկտեղելով գարմանայի պարունակներու մէջ:

«Կեանքի եւ մահուան համերաշխութիւն» լուսանկարին մէջ տապալող խաչաքարի մը վրայ աճած եւ զայն հին աստուծոյ մը պէս իր թաթով բռնած ծառի հաստ բունը անբերեակային հրաշալիքի մը դիմաց ապշահար կը ձգէ անհղիքը: Գեղեցկութիւնը չի վրկպիւր Հրայր Բազէի աչքէն: Անիկա մակերեսային չէ, այլ կը յայտնուի մերթ բանաստեղծական, մերթ կատակերգական եւ մերթ այլաբանական պատկերներու մէջ, մտածել տալով, թէ արդեօք արուեստը կ'ընդօրինակէ կեանքը, թէ կեանքը՝ արուեստը:

Բնութեան հզոր տեսարաններ գեղանկարչական խորհրդանշական պատասխաններու տպաւորութիւնը կ'առնեն: «Պատերազմի եւ



«Արցախ. 100 լուսանկարներ» (լուսանկարչական գիրքը Պէյրութի մէջ կը վաճառուի Լամազազայինի գրախանութիւնում) «Շաղաղան» կեդրոն:

խաղաղութեան միջեւ» լուսանկարին մէջ չորացած մտանքով ուղղաձիգ ծառեր ծաղկումի նշաններ ցոյց կու տան ամպրոպներով փոթորկած երկնակամարի մը տակ: Ուղղաթիւն մը «բազէի աչքով» լուսանկարուած Ամբաստի վանքին շուրջ հաւասար հեռաւորութեամբ շարուած ծառեր վաշտերու նման կը հսկեն պարիսպներուն, ճամբաներուն եւ հերկուած դաշտերուն: Տարօրինակ նմանութիւն մը կայ այս ծառերուն եւ Արցախի բանակէն զօրամասի մը միջեւ, որ տողանցքի պատու խիտ ստուերներ կը տարածէ հողին վրայ: մարդկային ճիգը ապարդիւն չի կորսուիլ այս բնաշխարհին մէջ: «Գլխալիմ ջուրն է իջնում» լուսանկարին մէջ շերտ-շերտ պատմութիւնը կը հոսի անձայրածիր ըլուրներ կտորող ինչպէսի գետին հետ: Թռչուն մը կը կտրէ ակնապատուած դաշտ մը՝ յիշեցնելով մարդկային խոցելիութիւնը: Ձիւնով ծածկուած ճիւղեր սպիտակ խաղաղութեան ցանց մը կը հիւսեն Ստեփանակերտի շուրջ: Սեւ ազուսներ եւս մաս կը կազմեն այս բնաշխարհին. լուսանկարիչը գանոնք կը վանէ մայր երկինքներն անդին:

«Եթէ լուսանկարիչը բաւարար չափով լաւ չեն, կը նշանակէ, թէ բաւարար չափով մօտ չես», ըսած է հուշակաւոր լուսանկարիչ Ռապրէլ Քափա: Թէեւ անոր ահնարկութիւնը կը վերաբերի պատերազմի լուսանկարներու, սակայն կարելի է այս չափանիշով դաստի Հրայր Բազէի արուեստը. ան այնքան մօտ է իր լուսանկարած աշխարհին իւրաքանչիւր բնակիչին, ծառին ու շուքին, որ թոյլ կու տայ իր լուսանկարչական գործիքը խօսի անոնց մասին, առանց բունագրօթիկ ճիգի ու ձեւակերպութեան պատմելու համար պարզ ու անպաճճաճ մտաւորութիւններ:

Տատիկի եւ Պապիկի յուշարձանին տակ հարսանեկան խմբանկար մը կեանքի շարունակականութեան եզրափակիչ խաղի մը պէս իր աւարտին կը մօտենցնէ լուսափայլ պատկերագիրքը: Դիտողը չ'ուզէր դարձնել անոր վերջին էջերը, ինչպէս պիտի չուզէր փակել լաւ գրուած գիրք մը, որուն իւրաքանչիւր նախադասութիւնը ինքնին խորհրդանշական մտադրութիւն է: Հայ գինուորը իր մարտկոցին նեղ պատուհանին եւ իր գէնքին նշանոցին մէջէն կը դիտէ դէպի սահմանային շրջաններ տարածուող լոյսը: Քերթաշարի կիրճին երկայնքին սողացող խաւարին մէջ ըլուրներն ու ամպերը կը գրեկն բոցավառ լիալուսին մը: Իրօք, նոյնիսկ ամէնէն տրտում լուսանկարները կը փառաւորեն լոյսին յաղթանակը: Կիւլիստանէն ճողոպրած կնոջ մը վշտահար դէմքին կէսը մուծի մէջ է, սակայն լոյսը բալասանի նման տարածուած է անոր դէմքին միւս կէսին վրայ եւ կնոյ տրտմութիւնը տեղի կու տայ անոր տոկունութեան:

Ստեփանակերտի շէնքերուն միջեւ կամ ազատագրուած Շուշիի հնամենի մէկ տան դիմաց երկար թեւերու վրայ ծածանող լուսեղները բնական են վերադասուելու կեանքի գուարթ մթնոլորտ մը կը ստեղծեն իրենց կոկիկ շարուածքով: Ծառի մը վրայ թառած մանուկներ թատերական իրադարձութեան մը պէս կը դիտեն Հայաստանի նախագահին այցելութիւնը եւ անոր շուրջ հաւաքուած մտահոգ մարդիկը: Անձկնութեան եւ երգիծանքի հաւասարակշռուած ալիքներ կը ծաւալեն պատկերագիրքին էջերուն մէջ՝ գոյութեան կանոնութեան երկուութիւնները մէկտեղելով գարմանայի պարունակներու մէջ:

«Կեանքի եւ մահուան համերաշխութիւն» լուսանկարին մէջ տապալող խաչաքարի մը վրայ աճած եւ զայն հին աստուծոյ մը պէս իր թաթով բռնած ծառի հաստ բունը անբերեակային հրաշալիքի մը դիմաց ապշահար կը ձգէ անհղիքը: Գեղեցկութիւնը չի վրկպիւր Հրայր Բազէի աչքէն: Անիկա մակերեսային չէ, այլ կը յայտնուի մերթ բանաստեղծական, մերթ կատակերգական եւ մերթ այլաբանական պատկերներու մէջ, մտածել տալով, թէ արդեօք արուեստը կ'ընդօրինակէ կեանքը, թէ կեանքը՝ արուեստը:

Բնութեան հզոր տեսարաններ գեղանկարչական խորհրդանշական պատասխաններու տպաւորութիւնը կ'առնեն: «Պատերազմի եւ

ԵՐԿՆԱՅԻՆ ԱՐԱՐԱԾՆԵՐ ԿԸ ՇԱՐԺԻՆ ՏԱՐԵՐ ՈՒՂՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ

ՍԵՒՊՈՒՌՆԻ ՄԻՍՖՈՆՍԻԵ ՆՈՒԱԳԱՆՈՒՄԸ ԿԸ ԿԱՏԱՐԷ ԱԼՔՐԵՏ ՃԱՆՁՔԻՆԻ ՍԵԿ ՇԱՏԱՆՈՒԱԳՐԸ, ՈՐՈՒՄ ԵՐԳԵՅՈՂՈՒԹԵԱՆ ԲԱԺԻՆԸ Կ'ԸՆԴՂՈՒՄԸ ԸՆՏՈՒՄԵՆԻՒՆՆԵՐՈՒ ԳՐԻՊՈՐ ՆԱՐԵԿԱՑԻՒ «ՄԱՏԵԱՆ ՈՂՔԵՐԳՈՒԹԵԱՆ» ԱՂՕԹԱԳԻՐԷՆ: «ՏԻ ԷՅՃ» ԿԸ ԳՐԷ.

Ամէն տարի Մեկուսուսի սիմֆոնիք նուագախումբը 4 յայտագիրներէ բաղկացած համերգաշարով մը կը փորձէ կատարել դասական արդի երաժշտութեան գործեր: Անոր երրորդ համերգին յայտագիրը կ'ընդգրկէր աւստրալիական եւ ռուսական գործ մը:

Յայտագիրին առաջին կամքը բաժնին մէջ Պրէթ Տիս նուագեց իր յօրինած դաշնակի հնգեակին՝ «Վոյսըգ աֆ էյնգելը» շուքակի բաժնիւր, անգամ մը եւս ոգեկոչելով այն արարածները, որոնք իր երեւակայնութիւնը հրահրած են անցեալին:

Ալֆրէտ Ծնայթի երկսեռ երգախումբի համար յօրինած հաստատուագը բաղկացած է 4 շարժումներէ եւ երգախումբային երկար բաժնիները, որոնք հիմնուած են 10րդ դարու հայ ժողովուրդի բանաստեղծ Գրիգոր Նարեկացիի գրութիւններուն վրայ, յօրինուած են առանց նուագախումբի երգուելու համար:

Մեկուսուսի սիմֆոնիք նուագախումբին երգախումբը գեղարուեստական ղեկավար ձանաթըն կրիվ-Սիթի խմբավարութեամբ որոշ յաջողութեամբ կատարեց այս դժուար գործը:

Շնայթի առեղծուած մը կը մնայ բազմաթիւ ունկնդիրներու համար, նոյնիսկ երբ անոնք տարիներ շարունակ կը լսեն անոր գործերը:

Այս հատանուագին մէջ կը մէկտեղուին ռուսական եկեղեցական երաժշտութեան ոճերը, որոնք սկիզբ կ'առնեն Պրոֆիտիանսքի աւանդութենէն եւ կը հասնին մինչեւ Ռախմանինովի ժամագրութիւններն ու անհաշտ ներդրումները: Անոնք ձայնային կարգ մը փորձարկումներով կը հակասեն Նարեկացիի գործին խաղաղ ու ներդաշնակ բովանդակութեան:

ՌՈՒՍԵՒԱՍԵՐԻԿԵԱՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՆՆԱՓՈՂԻՍԻ ՄԷՋ

ՌՈՒՍԵՒԱՍԵՐԻԿԵԱՆ, 28 (ՌՈՅԹԸՐԸ).- Ռուս եւ ամերիկացի պաշտօնատարներ համաձայնած են, թէ կարելի է երկու երկիրներուն միջեւ գործակցութիւնը ամրապնդել՝ պայքարելու համար կորիւպցիոն, կենսաբանական եւ քիմիական ահաբեկչական սպառնալիքներու դէմ:

Մ. Նահանգներու արտաքին գործոց փոխ նախարար Ռիչարդ Արմիթէճ եւ անոր ռուս պաշտօնակիցը՝ Վիաչեսլաւ Տրուպիչընով Աննափոխի մէջ (Ուաշինկթընի մօտ) կայացած պաշտօնական տեսակցութիւնը զլիսաւորած են:

Անիկա կ'իյնայ հակաահաբեկչութեան մասին ռուսեւամերիկեան աշխատանքային խմբակի գործունէութեան ծիրէն ներս: Յաջորդ ժողովը պիտի կայացուի Մոսկուայի մէջ, Դեկտեմբերին:

Երկու պատուիրակներն են համաձայնած են, թէ անհրաժեշտ է թափ տալ երկկողմանի գործակցութեան, ահաբեկչութեան դէմ պայքարելու համար՝ ԵԱՀԿ, ՕԹՄՆ - Ռուսիա Խորհուրդի եւ միջազգային այլ կառոյցներու ծիրէն ներս:

ՋԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ԳԾՈՎ՝ ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ՕՐԷՆՔ ՄԸ

ՄՈՍԿՈՒԱ, 28 (ՌՈՅԹԸՐԸ).- Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին Կիրակի օր ստորագրած է օրէնք մը, ըստ որուն՝ ռուս երիտասարդներու պիտի արտօնուի պիտուորական պարտադիր ծառայութեան փոխարէն այլ աշխատանք կատարել՝ վերջ տալով պիտուորական պարտադիր ծառայութեան երկարատեւ պատմութեան մը:

Կրեմլին յայտնած է, որ Փութին ստորագրած է նաեւ օրինագիծ մը, որուն նպատակը Ռուսիոյ մէջ ծայրայեղականութեան դէմ պայքարիլ է:

Չինուորական ծառայութեան վերաբերեալ օրէնքը, որ արդէն վաւերացուած է խորհրդարանին կողմէ, պիտի արտօնէ խաղաղարար կամ կրօնական համոզումներով մարդոց կամ փոքրամասնութեանց պատկանողներու, որ պիտուորական ծառայութեան փոխարէն հիւանդանոցներու, բանտերու կամ դպրոցներու մէջ աշխատին:

Այսուհանդերձ, անիկա կը պարտադրէ երիտասարդներուն, որ երեքուկէս տարի աշխատին, այսինքն՝ պիտուորական ծառայութեան գրեթէ կրկնապատիկը:

Ծայրայեղականութեան կապուած օրէնքը ապօրինի կը դարձնէ ցեղային կամ ազգային գերիշխանութեան վրայ հիմնուած քարոզչութեան տարածումը, նացի խորհրդանիշներու գործածութիւնը, պինեալ խմբակներու ստեղծումը:

ՊԼՈՒՏԱՆԻ ՄԷՋ ԽԱՏՏԱՍԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՈՒՄԻՆ...

Վերջին յայտարարութիւններուն նման հարցեր, բայց բնիկային հեռաձայնի հարցին մասին ոչ մէկ ակնարկութիւն կատարուեցաւ, ըսաւ ան:

«Մեծ խնդիրը լիբանանեան իշխանութեան բեւեռներուն միջեւ մղուած պատերազմները չէ, այլ՝ Լիբանանի քաղաքական վարչաձեւը: Իշխանութիւնէն ներս եւ վարչակարգի տարբերութիւններուն միջեւ պայքար կայ, իսկ բնիկային հեռաձայնի թղթածրարը կուտարաններ մը ըլլալէ աւելի այդ պատերազմներուն մէջ գործածուող զենքերէն մէկն է», դիտել տուաւ Սապրճ, հարց տալով, որ այս թղթածրարին շուրջ համաձայնութեան մը գոյացումը պիտի մարէ՞ վարչակարգի բեւեռներուն միջեւ տարակարծութիւններու հրդեհը: «Իշխանութեան պետերուն միջեւ հակամարտութեան վերջ պետք է դրուի եւ այդ տարակարծութիւնները պէտք է լուծուին տրամաբանական ձեւով: պէտք է տրուին իրապաշտ եւ գեների վրայ տիրող տրուեալներուն համապար-

ՀԵՊՐՈՆԻ ՄԷՋ ՀՐԵԱՆԵՐ ՍՊԱՆՆԱԾ ԵՆ ՈՒԹ ՏԱՐԵԿԱՆ ՊԱՂԵՍԻՆՅԻ ԱՂՋՆԱԿ ՄԸ

ՓԱՌԸԼ ԿԸ ՅԱՅՏԵ, ԹԵ ՊԱՂԵՍԻՆՅԻ ՊԱՇՏՕՆԱՏԱՐՆԵՐՈՒ ԸԵՏ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՊԻՏԻ ՌԻՆԵՆԱՅ ՕԳՈՍՏՈՍԻՆ

Մ. Նահանգներ երկ կայունած են, թէ Օգոստոսին պաղեստինցի պաշտօնատարներու հետ տեսակցութիւն պիտի ունենան՝ ապահովութեան մարտի բարեկարգումներու մասին, իսկ Իսրայէլ խոստացած է Այսրորդանանի մէջ պաղեստինցիներու դժուարութիւնները մեղմացնել:

Մ. Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուլը, որ ասիական շրջապատուի մը ձեռնարկած է, յայտնած է, որ անցեալ շաբաթ տեսակցութիւն մը ունեցած է իսրայէլեան պատուիրակութեան մը հետ եւ պաղեստինցիներու հետ հանդիպումը պիտի կատարուի յառաջիկայ ամիս, երբ ինք Ռա-

չինկթըն վերադառնալ:

Պաղեստինցի բարձրաստիճան բանագնաց Սաէպ Ուրեյ-քաթ Շաբաթ օր յայտնած է, թէ տեսակցութիւնը տեղի պիտի ունենայ Օգոստոս 5ին եւ 6ին եւ անոր պիտի մասնակցին ինք եւ ներքին գործոց նոր նախարար Ապտէլ Ռապպաթ Եանա:

Իսրայէլի արտաքին գործոց նախարար Շիմոն Փերէս վերահաստատած է, թէ Իսրայէլ կը նպատակադրէ Այսրորդանանի իսրայէլեան կրակմարի դրութեան վիճակի մէջ գտնուող 8 քաղաքներէն 7ին մէջ 700 հասարակական կառուցումներու դժուարութիւնները թեթեւցնել:

Իրանագիտական նորագոյն ճիգերը, սակայն, գեների վրայ կա-

ՌՈՒՍԱԿԱՆ «ԻՒՆԻՎԵՐՍԻՏԵՆ» ՕԳԱՆԱԻ ՄԸ՝ ՋԱԽՋԱԽՈՒՄԸ. 15 ՁՈՋ

ՄՈՍԿՈՒԱ, 28 (ՌՈՅԹԸՐԸ).- Ռուսական «Իլիուշին Իլ-86» տիպի օդանավ մը, որ ճամբորդներ չէր փոխադրեր, Կիրակի օր ջախջախուած է անտառի մը մէջ, Մոսկուայի մեծագոյն օդակայանէն թռիչք առնելէն անմիջապէս ետք: Անոր անձնակազմին 165ն 15ը կոհ գացած են: Ոստիկանութիւնը յայտնած է, թէ փրկուած են երկու կիներ, որոնց վիճակը շատ ծանրակշիռ էր. անոնցմէ մէկը եւս աւելի ուշ մահացած է:

«Իլիուշին»ը, որ կրնայ մինչեւ 350 ճամբորդ փոխադրել, Սոչիէն վերադարձած է: Նման օդանավներու գործածութեան սկսելէ ի վեր (1980) անաչին անգամ ըլլալով էր, որ «Իլ-86» մը կը ջախջախուէր:

Թղթակից մը յայտնած է, թէ տեսած է օդանավը, որ «Երեմեթիեւ-0-1» օդակայանէն բարձրացած է, ապա պոչին վրայ ջախջախուած՝ մօտակայ անտառի մը մէջ: Ջախջախումին յաջորդած են շարք մը պայթումներ եւ հրդեհ մը:

Արկածին պատճառը յստակ չէ:

ՌՈՒՍ 5 ՋԻՆՈՒՈՐՆԵՐ՝ ՍՊԱՆՆՈՒՄ ԵՆ՝ ՌՈՒՍԵՒՎՐԱՅԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻՆ ՄՕՏ

ՄՈՍԿՈՒԱ, 28 (ՌՈՅԹԸՐԸ).- Ռուս սահմանապահ 5 պիտուորներ սպաննուած են եւ 3 ուրիշներ վիրաւորուած՝ Չեչենիա թափանցել փորձող ըմբոստ պիտուորներու հետ բախումներու ընթացքին, յայտնած է սահմանապահ պիտուորներու իրամասնատարութիւնը Կիրակի օր:

Անոր մէկ բանբերը ըսած է, թէ ռուսեւկրացական սահմանին մօտ տեղի ունեցած բախումին ընթացքին 9 ըմբոստ սպաննուած է եւ 2 ուրիշներ՝ ձեռքաւորուած:

Ռուս պաշտօնատարներ յայտնած են, թէ ըմբոստները կը փորձէին վրաստանէն Չեչենիա մտնել, սակայն վրացի պաշտօնատարներ ըսած են, թէ սահմանին իրենց կողմը ամէն ինչ հանդարտ է:

Ըստ ռուս սահմանապահ պիտուորներու տեղեկութեանց, յաւելեալ ուժեր փոխադրուած են շրջան, ինչպէս նաեւ ռուսական օդուժը կորավիզ կը կանգնի գործողութիւններուն:

ԻՐԱՔ ՊԱՏՐԱՍ Ե ԴԻՄԱԴՐԵԼՈՒ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՈՐԵՒԷ ՅԱՐՁԱԿՈՒՄԻ

Իրաք երկ կայունած է, որ անհրաժեշտ բոլոր միջոցառումներուն դիմած է՝ ամերիկեան պիտուորական յարձակում մը դիմագրաւելու համար:

Խորհրդարանի նախագահ Սատուն Համատի ըսած է, թէ Իրաք ինքնավստահ է, որ ձախողութեան պիտի մատնէ ամերիկեան զինուորական զորքերը, որ կը միտի նախագահ Սատուն Հիւսէյ-

նը տապալել:

Արտաքին գործոց նախարար Նաժի Սապրի Շաբաթ գիշեր ամերիկեան «Մի. Էն. Էն» կայանին շեշտած է, թէ Ռաչինկթըն կ'ուզէ, որ ՄԱԿի պէնքերու քննիչները Իրաք վերադառնան մէկ նպատակով միայն՝ Իրաքի մասին պիտուորական եւ գաղտնի սպասարկութեանց վերաբերեալ տեղեկութիւնները

ՀԱՄԱՀ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ Է. ԲԱՆԱԿՈՒՄԻՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ...

Միջուկային զենքերու թիւնները:

Հ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցիչ Հրանդ Մարգարեան իր արտասանած խօսքին մէջ ըսաւ, թէ ինչ ալ ըլլան պայմանները, միշտ պէտք է նեցուկ կանգնելի հարեմբիւն եւ միշտ աշխատել աւելի լաւ ապագայի մը համար: Ան Հ.Մ.Ը.Մ. կանոններուն կողմ շարքերուն անդադանալով նշեց, թէ Հ.Յ.Դ. Դաշնակցութիւնը շատ զօրաւոր եւ հպարտ կը զգայ Հ.Մ.Ը.Մ.ով:

Հ.Մ.Ը.Մ. Կեդրոնական վարչութեան անունով խօսք առաւ ժիրալը Սարգիսեան, որ ըսաւ, թէ շատ աշխատանք կայ հարեմբիւն մէջ: Ան նշեց, թէ ազգային ճամայնապատկերին մէջ Հ.Մ.Ը.Մ. ը ունի իր իւրայատուկ դերն ու առաքելութիւնը:

Ապա կաթողիկոսին օրհնութեան խօսքը փոխանցեց անոր ներկայացուցիչը, որ շեշտեց սկառուական կեանքի կարեւորութիւնը:

Հանդիսութիւնը փակուեցաւ սկառուներու տողանցով:

Երէկ՝ Կիրակի, սկառուները այցելեցին էլմիածին եւ Սարգարապատ:

Այսօր, Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեան պիտի այցելէ բանակավայր եւ պիտի ուղղէ իր խօսքը բանակողներուն:

Կ'ԸՍԵ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ

Սապրճ ըսաւ, որ նախագահ Լահուտէն կը պահանջուի արտակարգ, պատմական եւ հիմնական դերակատարութիւն ունեննելու ազգային լայնածիր երկխօսութեան վերսկսումին մէջ:

Սապրճ ըսաւ, որ նախագահ Լահուտէն կը պահանջուի արտակարգ, պատմական եւ հիմնական դերակատարութիւն ունեննելու ազգային լայնածիր երկխօսութեան վերսկսումին մէջ:

«ԻՍՐԱՅԷԼ ԻՐ ԲՈՆԱԳՐԱԻՄԱՆ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ...»

Սիւրիան, վեհափառը ըսաւ. «Կարելի չէ այլեւս լուռ մնալ այս հարցին դիմաց: Նման բռնարարներ ու մարդկային իրաւունքներու անտեսումներ անընդունելի են ներկայ քաղաքակիրթ աշխարհին մէջ: Չէնքի ուժով ուրիշին իրաւունքը խլելու փորձը խոտոր կը համեմատի միջազգային օրէնքներուն եւ երբեք չի նպաստեր ապգերու միջեւ փոխ յարաբերութեանց վարգացման, փոխադարձ վստահութեան յառաջացման, ինչպէս նաեւ խաղաղութեան ու արդարութեան հաստատման: Իսրայէլեան բանակը պէտք է Միջին Արեւելքէն ներս, ըսաւ Արամ Ա. կաթողիկոս:

Արամ Ա. արդէն լծուած է աշխատանքի՝ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի, Վատիկանի եւ միջազգային այլ կազմակերպութիւններու ու կառոյցներու ճամբով միջազգային հանրային կարծիքին ուղղութեանը մարդկային իրաւունքներու մարտնչութեանը: Փոխանորդը Միջին Արեւելքը, այլ առիթ կ'ընծայէ նոր արիւնսահեղութեանց: Փոխանորդը հասկացողու թեան, յարգանքի ու վստահութեան վրայ հիմնուած երկխօսութիւնը եւ փոխադարձ իրաւունքներու ճանաչումը միայն բռնազրուեալ եկեղեցապատկան կալուածին խաղաղութեան

IT'S Panasonic SUMMER-TIME AGAIN!

Win With Us

L.L. 70,000,000

280 PRIZES including:

- 34" TVs
- DVD Mini Components
- 29" TVs
- 15" TVs
- and Radio Cassette Recorders.

WIN

This offer is valid from July 8 till September 8, 2002 Under the supervision of the Lebanese National Lottery